

NEOSTERYL

Ձեռքերի ախտահանիչ միջոց

Նախատեսված է մասնագիտացված կիրառման համար

Կիրառման ոլորտ

Նախատեսված է օգտագործել բարձր աղտոտվածություն ունեցող և ձեռքերի մաշկի արագ ախտահանում պահանջող ցանկացած բնագավառում. կիրառելի է որպես մաշկի հակասեպտիկ միջոց՝ բժշկական անձնակազմի համար, վիրաբույժների՝ ձեռքերի ախտահանման, մանկական հաստատությունների աշխատակիցների, սննդի արտադրամասերի և հիգիենիկ բարձր նորմատիվներ պահանջող այլ հաստատություններում օգտագործելու համար:

Բաղադրությունը - Ethanol – 65,0%, Propan-2-ol – 4,7%, Quaternary ammonium compounds, benzyl-C12-16-alkyldimethyl, chlorides – 0,2%.

Ակտիվ է բակտերիաների, սնկերի և վիրուսների դեմ: Պատրաստուկային ձև

Neosteryl Blue-ն արտադրվում է կիրառման համար պատրաստի ձևով:

Ձեռքերի հիգիենիկ ախտահանում

Մինչ Neosteryl Blue-ով ախտահանումը՝ անհրաժեշտ է ձեռքերը նախապես լվանալ, չորացնել, այնուհետև ձեռքի ավի մեջ լցնել 3 մլ չնոսրացված Neosteryl Blue և ձեռքերը շփել մինչև ամբողջովին չորանալը, բայց ոչ քիչ քան 30 վրկ:

Վիրաբույժների ձեռքերի հիգիենիկ ախտահանում

Մինչ կիրառումը ձեռքերը և նախաբազուկները մանրակրկիտ լվանալ տաք հոսող ջրով և Mediseep լվացող միջոցով մոտ 2 րոպե, չորացնել ստերիլ անձեռոցիկներով: Չոր ավերի մեջ լցնել 5 մլ Neosteryl Blue և շփել ձեռքերը՝ տարածելով նյութը նախաբազուկներին՝ 2,5 րոպեի ընթացքում:

Այնուհետև, կրկնել՝ ևս մեկ անգամ 5 մլ լցնելով ավերի մեջ և 2,5 րոպե շփելով: Հնդհանուր առմամբ, ախտահանումը պետք է տևի 5 րոպե: Ստերիլ ձեռնոցները անհրաժեշտ է հագնել ախտահանիչ միջոցի ամբողջական չորանալուց հետո:

Պահպանման պայմաններ

Պահել գործարանային փաթեթավորմամբ, ամուր փակված վիճակում, 5-23°C ջերմաստիճանում, չոր և լավ օդափոխվող տարածքում, հեռու սննդամթերքից, խոնավության աղբյուրներից, հեշտ բռնկվող և դյուրավառ իրերից: Խուսափել արևի ուղիղ ճառագայթներից:

Պահպանման ժամկետ

3 տարի՝ արտադրության տարեթվից:
Արտադրող Baltiachemi OÜ; Maagi 5, 74114 Maardu, Estonia.
Հեռ. +3726214694; info@baltiachemi.ee; www.baltiachemi.ee
Ներկայացուցիչը Հայաստանում՝ ԱԳՐՈՏԵՆ ՍՊԸ
Հեռ. +374 10 20 62 20 | +374 91 20 62 20 | info@agrotech.am
www.agrotech.am | Հասցե՝ Երևան, 0014, Ադոնցի 2/1

